բողոքների մի երկար շարք՝ Լենինին, Չիչերինին, Օրջոնիկիձէին և «ամենքին, ամենքին, ամենքին»: Իսկ մինչ այդ Ղարաբաղի ուղղութեամբ շարժւում էին մեծ քանակութեամբ ռուս և ադրբէջանցի զօրքեր: Եւ երբ բոլշևիկեան ուժերը Ղարաբաղի ճակատում արդէն այնքան էին, որ կարելի էր սկսել վճռական գործողութեան, մայիս 21-ին Դրօի մօտ եկան Օրջոնիկիձէի ներկայացուցիչներ Ս. Տէր-Գաբրիէլեանը, Կայդալովը և Պերնանին և յայտարարեցին, որ խորհրդային իշխանութիւնը որոշել է գրաւել Ղարաբաղը մինչև Հաքեարի գետը: Դրօն բողոքեց՝ յայտնելով, որ նման հարցերի համար պէտք է դիմել Հայաստանի կառավարութեան, բայց ստիպած տեղի տուեց և, մայիս 26-ին, իր էքսպեդիցիոն զօրամասով հեռացաւ Զանգեզուր:

Հայաստանի կառավարութիւնը վճռական բողոք ուղարկեց Մոսկւա, բայց այս էլ, միւս բոլոր բողոքների պէս, մնաց անհետևանք:

Հետևանք չունեցան և Հայաստանի ու Խորհրդային Ադրբէջանի միջև սկսուած բանակցութիւնները: Ցեղաշրջումից անմիջապէս յետոյ ուրիշ ներկայացուցիչների հետ ձերբակալւել էր և Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մ. Ցարուբիւնեանը՝ ներկայացուցչութեան բոլոր անդամների հետ միասին: Ներկայացուցչութիւնը մատնւել էր թալանի: Այդ, ինչպէս և Հայաստանի ու Ադրբէջանի միջև վէճի առարկայ եղող հարցերը լուծելու նպատակով՝ սկսւեցին բանակցութիւններ Ադրբէջանի Ցեղկոմի և Հայաստանի կառավարութեան միջև: Բանակցութիւնները վարում էին Ադրբէջանի Ցեղկոմի անդամ Հուսէյնովը և Հայաստանի Թիֆլիսի դիւանագ. ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը: Առաջարկւեց դումարել խորհրդաժողով— ադրբէջանցիք ուզում էին Բաքւում, հայերը՝ Ղազախում: Հայաստանի կողմից պատւիրակութեան անդամ նշանակւեին Մ. Ցարուբիւնեանը*), Տ. Բէգզադեանը, Ն. Ադրալեանը և Կ. Ղազդեանը: Ադրբէջանի կողմից՝ նախագահ Իբրահիմ Աբալով, անդամներ՝ Լոմինաձէ և Միկոյեան: Խորհրդաժողովի հետ կապւած խնդիրները, ինչպէս և Ադրբէջանի Երևանի ներկայացուցչութեան վիճակը կարգաւորելու համար, օգոստոս 14-ին, Երևան եկաւ Ադրբէջանի Ցեղկոմի ներկայացուցիչ Դովլաթեանը քարտուղար Գասպարեանի և սուրհանդակ Մորիս Ֆաբրի հետ: Աւելի շուտ լրտեսական մի խումբ էր այդ: Ի հարկէ, այդ բանակցութիւններից էլ բան դուրս չեկաւ. Ադրբէջանի վարիչները դիտմամբ դրութիւնը թողնում էին անորոշ ու խճողւած, որպէսզի աւելի հեշտութեամբ իրականացնեն իրենց «մուսաւաթական ծրագրները»: Նրանց ջանքն էր ինչ գնով և լինի կցել Ադրբէջանին Ղարաբաղ—Զանգեզուր—Շարուր—Նախիջևանը: Ադրբէջանցի բոլշևիկներն էլ, մուսաւաթականների և իթթիհատականների պէս, աշխատում էին Ադրբէջանը կապել «յեղափոխական» Թիւրքիային, ինչպէս և Թիւրքերը ջանք էին թափում Ադրբէջանը պահել իրենց ազդեցութեան տակ և օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար: Հէնց Ադրբէջանի խորհրդայնացումը Թիւրքերի գործն էր: «Կարմրացնելով» Ադրբէջանը, Թիւրքերը

*) Խորհրդաժողովի առթիւ Մ. Ցարուբիւնեանը արձակւեց բանտից: